Հայաստանի ասորական
«Խայադթա» ֆեդերացիա

ܐܬܘܪܝܐ ܕܡܫܝܚܐ ܥܡܐ
ܚܝܝܬܐ ܕܡܬܬܐ ܐܬܘܪܝܐ

ՀՀ, Երևան, 0050, Ղարիբջանյան փող. 48
РА, Ереван, 0050, ул. Гарибджаняна 48
48 Garibjanyan Str., 0050, Yerevan, RA

mobile: (374 91) 432-961
mobile: (374 94) 432-961
Հեռ/Тел/Tel.: (374 10) 440-538

Էլ.փոստ/Эл.почта/E-mail: Irkongas@gmail.com
Irkongas@mail.ru
IrinaSG@yahoo.com

18.06.2019 թ.

ՀՀ ԱԺ-ի Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ա. Կոստանյանին

Հարգելի տիկին Կոստանյան,

Ձեր կողմից ՀՀ վարչապետին ուղղված նամակը ի կատարումն ՀՀ վարչապետի 2019 թվականի մայիսի 20-ի N 02/05.4/23509–2019 հանձնարարականի ուղարկվել էր ՀՀ կրթության տեսչական մարմին ուսումնասիրելու նպատակով:

ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից ստացել եմ պատասխան, որում կրկին չկան բավարար պատասխաններ և մեր տեսանկյունից թերի է: Իհարկե շնորհակալ ենք ՀՀ կրթության տեսչական մարմի աշխատողին, որը իրականում փորձ է կատարարել ուսումնասիրել հարցը, սակայն երևի թե իր հետազոտման ընդհացքում իրեն տրամադրել են ոչ ճիշտ տեղեկատվություններ:

Այսպիսով ի պատասխան ՀՀ կրթության տեսչական մարմնի 12.06.2019 թ. № 01/01-1/364 - 2019 գրության ներկայացնում եմ առաջացած հարցադրումները:

I. ***Առաջին կետում նշված հարցի վերաբերյալ:***

Փորձեր եք կատարում քողարկել այն անօրինական երևույթը, որը տեղի է ունեցել Նոր Արտագերս գյուղում՝ կապված ասորական համայնքի իրավունքների ոտնահարման հետ:

Նշեմ, որ թոշակի տարիքին հասնելը հիմք չի կարող լինել անձին աշխատանքից ազատելու, հատկապես, որ այդ անձն ասորերենի միակ մասնագետն է: Հավելեմ, որ իր՝ 2012 թվականին գրված ազատման դիմումը բացակայում է, ինչն արդեն սույն անձի իրավունքների ոտնահարում է: Նամակում մեջբերված է Ռ. Ավչյանի գրավոր բացատրությունից հատված. *«..Հայտնում եմ նաև, որ Ես տեղեկացված եմ եղել իմ աշխատանքից ազատվելու վերաբերյալ, քանի որ այն կատարվել է իմ գիտությամբ և իմ դիմումի համաձայն....»,* ինչն արդեն արձանագրում է այն փաստը, որ այդ միջավայրում վախի մթնոլորտ է տիրում, և որ Արմավիրի մարզի իշխանությունները փորձում են թաքցնել Նոր Արտագերսի դպրոցի տնօրինության հանցավոր գործողությունները այն է՝ ադմինիստրատիվ լծակները օգտագործելով, այդ կնոջ վրա ճնշում գործադրել, որպեսզի նրան ստիպեն ստել և այդ սուտ տեղեկությունը տրամադրել վերադասին:

Նշեմ, որ կողմնակի կազմակերպությունը՝ «Թուխմանուկ» ՀԿ այդ հանգամանքը հետազոտել է և արձանագրել է, որ Ռախի Ավչյանը ոչ մի բանից տեղյակ չի եղել, և ես իմ նամակում իրականությունն եմ նկարագրել: Աշակերտների հետ հարցազրույց անցկացնելով պարզվել է նաև, որ ասորերենի դասերն անցկացվում են շաբաթը մեկ անգամ: Իսկ Արմավիրի մարզպետարանի կողմից ուղարկված նամակում նշված է, որ ասորերենի դասերը անցկացվում են շաբաթը չորս

անգամ: Ինձ թվում է, որ արդեն այդ հանգամանքը պարզ ցուցադրում է, թե իրականում իրավիճակը որն է:

Այդ կազմակերպությունը իր եզրակացությունը հրապարակելու է:

II. ***Երկրորդ կետում, երրորդ մասում նշված հատվածով*** իրենք ***հաստատում են*** այն փաստը, որ ***մենք ունենք որակավորում ունեցող ուսուցիչներ:*** Ես ասեմ ավելին, որ մենք նաև ունենք ասորերենի ուսուցիչների բազա, և այդ ուսուցիչներին աճեցրել ենք ՀՀ ԿԳՆ և ԿԱ ինստիտուտի հետ համատեղ՝ 1998 թվականից:

Հետևաբար ասորերեն դասավանդելու նշանակել ***դեղագետ-քիմիկոսի որակավորմամբ անձի, կարիք չկար:***

Անտրամաբանական է նաև իրենց կողմից նշված. *«ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2011 թվականի հունվարի 25-ի N 26-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 872-Ն հրամանով հաստատված հավելվածում «Դասավանդող՝ արտադասարանային կրթության (ըստ ոլորտների՝ երգի, պարի, ձեռագործի, նկարչության և այլ խմբակների)» պաշտոնի համար կրթությանը ներկայացվող պահանջներն են՝* ***միջին մասնագիտական կրթություն՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՄԲ»***

1. Այդ հավելվածում նշված է «...***ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՄԲ»:*** Տեղեկացնեմ, որ ասորերեն լեզուն դասավանդելու նշանակված անձը՝
   - Չի տիրապետում ասորերենին՝ լինելով ազգությամբ ասորի,
   - Համապատասխան վերապատրաստում չունի:

   Շնորհակալ ենք, որ գոնե ՀՀ կրթության տեսչական մարմինը վերջապես հաստատեց, որ «... *«Հայաստանի «Աթուռ» ասորական ասոցիացիայի» կողմից Բ. Ավդիշյանին տրված՝ ասորերեն լեզվի վերապատրաստման դասընթացներին մասնակցելու վերաբերյալ տեղեկանքը* ***չի կարող համարվել որպես ասորերենի ուսուցչի որակավորում հավաստող փաստաթուղթ:»***

2. Ընդհանրապես լեզուն (հատկապես ասորերենը) դասավանդելու նպատակով, ըստ իրենց, կարելի՞ է նշանակել նաև, օրինակ՝ բուժքրոջ որակավորում ունեցող անձի:

Իսկ դպրոցի տնօրինությունը ո՞նց է տեղեկացվում այն մասին, որ տվյալ անձը ունակ է համապատասխան լեզուն դասավանդելու, եթե այդ մասին հավաստող *«...տեղեկանքը աշխատանքի ընդունման ժամանակ* ***պահանջվող պարտադիր փաստաթուղթ չի համարվում»***:

Կարելի է ենթադրել, որ այդ դեպքում արձանագրում ենք ասորերեն լեզվի դասաժամեր, իսկ իրականում կարուձևի՞ դասաժամեր են տեղի ունենում:

Հետաքրքիր է մեր երկրում ամեն ի՞նչն է նմանատիպ ձևական բնույթ կրում: Օրինակ, Հայաստանը ամրագրում է, որ ասորական համայնքի պահպանման նպատակով ասորերենը պահպանվում է և դասավանդվում է դպրոցներում, իսկ իրականում ***«հզոր պետական մեքենան»*** ձեռնարկում է ամեն ինչ ասորական համայնքը ոչնչացնելու նպատակով: Ավելին՝ զայրանում է մեզ վրա, եթե մենք բարձրաձայնում ենք մեր իրավունքների ոտնահարման մասին:

Մեր կողմից բարձրացրած հարցը բխում է անհանգստությունից, որ ասորերեն լեզուն ՉԻ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՒՄ, որովհետև հասկանալի չէ՝ ինչու է պետք նշանակել անձի, որը չի տիրապետում ասորերենին, և ինչպես նա կարող է ապահովել ասորերենի ուսուցումը:

Սակայն մեզ հասկանալու փոխարեն մեր դեմ ՀԶՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆ է աշխատում և որը իր ԱՄԲՈՂՋ ՊԵՏԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ նպատակ է դրել ապացուցել սկզբունքը, որ մենք միշտ ճիշտ ենք: Թե դուք ո՞վ եք, որ փորձեք հարց բարձրացնել և մեզ սխալ հանել:

Ես ուզում եմ հասկանալ և հարց տալ, թե իշխանության և մեր նպատակը ո՞րն է. ապացուցել, որ իշխանության դեմ խաղ չկա՞, թե՞ իսկապես աշխատանք տանել, որ ասորի ժողովուրդը Հայաստանում չձուլվի, ինչը հնարավոր է մեր լեզուն պահպանելով:

Անկասկած ՊԵՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆ ասորական համայնքից բազում անգամ հզոր է և եթե նպատակ դնի՝ իհարկե մեզ՝ ասորիներիս Հայաստանում կոչնչացնի: Դա՞ է նպատակը և մեզ համար նոր իրավիճակը Հայաստանում:

III. Երրորդ բաժնում նշված հարցում նկատեմ, որ ՀՀ կրթության տեսչական մարմինը իրազեկված չէ իրական վիճակի մասին, քանի որ նամակում նշվել է «փոքրամասնության լեզու» ապահովելու երեք տարբերակ.

1. *«Այն ասորիները, որոնք որպես «փոքրամասնության լեզու» **ընտրում են ռուսերենը**, նրանց հանդեպ կրթական ոլորտում պետությունը իր պարտավորությունները **կատարում է ռուսերենով**, ովքեր **ասորերենը՝ ասորերենով**:*
2. *Այն ասորիները, որոնք որպես «փոքրամասնության լեզու» **ընտրում են ասորերենը**, նրանց հանդեպ կրթական ոլորտում պետությունը իր պարտավորությունները **կատարում է ասորերենով**:*
3. *Ասորիների մի մասը ցանկություն է հայտնել իրենց երեխաների դպրոցական կրթությունը **կազմակերպել ռուսերենով՝ միաժամանակ, ապահովելով նաև ասորերենի ուսուցումը**...»:*

Տեղեկացնեմ, որ այդ երեք տարբերակներից իրականում գոյություն ունի միայն մեկը՝ դպրոցական կրթությունը ***կազմակերպվում է ռուսերենով՝ միաժամանակ ապահովելով նաև ասորերենի ուսուցումը, որպես ԱՌԱՐԿԱ***»:

Նաև նշեմ, որ Հայաստանում դպրոցական կրթությունը ***կազմակերպվում է*** երկու լեզուներով՝ հայերենով և ռուսերենով: Մենք, ըստ Հայաստանի օրենքի, իրավունք ունենք մեր ուսուցման լեզուն ընտրելու: Պետությունը մեզ համար ապահովում է ***ասորերենի ուսուցումը՝ միայն ռուսերենով ուսուցմամբ հոսքերում:*** Հետևաբար խոսքը չի գնում ***«տարբեր լեզուների մասին պնդող»*** ասորիների մասին, այլ խոսքը գնում է ***ազգային փոքրամասնության կրթական առանձնահատկությունների մասին***:

Նաև նշեմ, որ այդ դպրոցները եղել են միայն ռուսական ուսուցմամբ առնվազն մի քանի տասնյակ տարի: Օրինակ՝ Դիմիտրով գյուղի դպրոցի 100 ամյակը նշվել էր 1978 թվականին, քանի որ այդ դպրոցը կառուցվել էր ասորի բնակիչների նախաձեռնությամբ՝ 1878 թվականին:

1990-ական թվականներին տեղի ունեցավ մեզ ավանդական կրթությունից զրկելու ընթացք, սակայն երբ որ մեր ժողովուրդն ըմբոստացավ, մեզ հանգիստ թողեցին՝ հասկանալով, որ մեր ժողովուրդը ավելի սուր խնդրի առաջ է կանգնած՝ որպես ասորի ժողովուրդ գոյատևելու կամ ոչ: Մեր ժողովրդին մեր ավանդական կրթությունը ապահովելով՝ Հայաստանին վտանգ չի սպառնում, այլ ապահովվում է մեր չձուլվելու հնարավորությունը:

IV. Նամակի չորրորդ բաժնում նշված հատվածը անհասկանալի է. *«Նկատի առնելով ուսումնական տարին ավարտվելու հանգամանքը՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով ուսուցում իրականացնող ուսումնական հաստատություններում 2019-2020 ուսումնական տարում տեսչական մարմնի կողմից կարող են իրականացվել վերահսկողական գործառույթներ՝ ելնելով անհրաժեշտությունից:»*

Ի՞նչ է նշանակում «ելնելով անհրաժեշտությունից»: ՀՀ կրթության տեսչական մարմի արտահայտությունից հետևում է, որ իրենք ոչ մի խնդիր չե՞ն տեսնում:

Տիկին Կոստանյան նաև դիմում ենք Ձեզ խնդրանքով բացի կրթական խնդիրները նաև օգնել լուծել մեր համայնքի հետ կապված խնդիրները, որոնք ընդհանուր պատկերով մեր մոտ ստեղծում է տպավորություն, որ մեր նկատմամբ ՀՋՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆ, ի դեմս Արարատի մարզի իշխանության, աշխատանք է տանում՝ ուղղված ասորական համայնքի ոչնչացմանը, որը մենք որակավորում ենք <<սպիտակ եղեռն>>:

1. Առաջին և ամենակարևոր հարցերից մեկն այն է, որ Արարատի մարզի հարևան գյուղի Տեր հայրը մեր մեկ եկեղեցին և մատուռը զավթել է և հայտարարում է, որ դրանք հայկական են: Նշեմ, որ Արարատի մարզի Դիմիտրով գյուղում (ասորական գյուղ է) մենք ունենք երկու եկեղեցի և մեկ մատուռ:

Փառք Աստծո, որ 2002 թվականի հունվարի 24-ի ՀՀ կառավարության N 65 որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակութային հուշարձանների ցուցակը, որի 3.38 կետում ամրագրված են Դիմիտրով գյուղի պատմության և մշակութային հուշարձանները:

Այդ փաստաթղթում նշված է, որ Ս. Աստվածածին եկեղեցին հիմնադրված է 1868 թվականին, իսկ Ս. Օշախ մատուռը 19-20 դդ.: Փաստաթուղթը կցված է:

Ասորիները Հայաստան են եկել 1828 թվականին և ազատ ու չբնակեցված տարածքում հիմնել են Կույլասար գյուղը (հետագայում վերանվանվեց Դիմիտրով): Հետևաբար, այդ գյուղում ապրում էին միմիայն ասորիները, որոնք իրենց գումարներով 1840 թվականին կառուցել են ուղափառ ասորական Եկեղեցի, 1868 թվականին՝ Մատ Մարիամ (ասորերեն) եկեղեցին, և նույն ժամանակահատվածում նաև Օշախ Բետ Սահրադ (Սագրադովների ցեղին պատկանող մատուռ): Նշեմ, որ այդ մատուռը կառուցել են իմ պապերը, հետևաբար իմ ցեղին պատկանող մատուռ է: Մենք ունենք նաև այդ հանգամանքը հաստատող փաստեր՝

- փաստաթուղթ այն մասին, թե այդ եկեղեցու հանձնման ժամանակ ինչքան գումար և մոմ կար այնտեղ: Նշեմ, որ այդ փաստաթուղթը ստորագրել են եկեղեցու խորհրդի հինգ անդամներ:
- Նաև ունենք վիդեո արխիվ, որում Դիմիտրով գյուղի բնակիչները (ականատեսները տարիքով են) պատմում են այդ եկեղեցու և մատուռի պատմությունը (7 տեսանյութ):

2005 թվականին հայ տերտերները եկել են և մեր՝ ասորական եկեղեցու աշխատողից (ազգությամբ ասորի) պահանջել են բանալիները: Այդ աշխատողը վախեցել և տվել է՝ չբարձրաձայնելով խնդիրը:

Իսկ 2017 թվականին Դիմիտրով գյուղի դպրոցի տնօրեն «նշանակվեց» մի երեցկին (Տեր Միքայել Քահանաի կինն է, ով մեր եկեղեցին զավթողներից մեկն է), ով մեր նկատմամբ սկսեց վարել շատ ագրեսիվ քաղաքականություն, ով հովանավորվում է ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Ալբերտ Մկրտչյանի կողմից: Նշեմ՝ այդ ագրեսիվ քաղաքականությունը մեր նկատմամբ ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կողմից որդեգրվել է 2010 թվականից, երբ Ալբերտ Մկրտչյանը նշանակվեց բաժնի պետ:

Տիկին Կոստանյան մայիսի 10-ին Դիմիտրով գյուղում տեղի ունեցավ ասորական միջոցառում, որին Դուք անձամբ ներկա էիք: Նաև ներկա էր Տեր Միքայելը և նրա կինը (այդ դպրոցի տնօրենը)՝ երկուսն էլ Մխչյան գյուղից: Խոսակցության մեջ հարց բարձրացվեց մեր՝ ասորական եկեղեցու և մատուռի վերադարձման մասին, ինչին Տեր հայրը պատասխանեց, որ ուշ է, արդեն ոչինչ չեք կարող անել, իսկ ասորական ուղղափառ Եկեղեցին հարկավոր է դարձնել ասորական առաքելական Եկեղեցի: Ես զարմացա, որ հայ եկեղեցու ներկայացուցիչը բավական չէ՝ առինքնել է մեր ասորական եկեղեցին և մատուռը, նաև իրեն թույլ է տալիս անամոթաբար խառնվել մեր համայնքին վերաբերող հարցերի մեջ, ինչի մասին ես իմ վրդովմունքն իրեն հայտնեցի:

2. Մինչև մենք զբաղված էինք Արարատի մարզի կրթական ոլորտում առաջացաց խնդիրների լուծմամբ նույն ժամանակահատվածում պարզվեց, որ առաջարկվել է Արարատի մարզի երկու ասորական գյուղերն (Դիմիտրով և Վերին Դվինը) ընդգրկել Համայնքների խոշորացման ծրագրի մեջ, ինչը նախկին իշխանությունները չէին անում՝ գիտակցելով, որ դա կբերի Արարատի մարզի ասորական համայնքի ձուլմանը:

Մենք արդեն վստահ չենք, որ ՀՀ իշխանությունները, ի դեմս Արարատի մարզպետարանի, արդեն միտումնավոր <<սպիտակ եղեռնի>> քաղաքականություն չեն վարում մեր ասորական համայնքի դեմ:

Տիկին Կոստանյան, երևույթների մի մասը ցավոք առաջացել են նախկին իշխանությունների օրոք: Մեր նկատմամբ կամաց-կամաց իրականացվել է նախկինում եղած բարենպաստ վերաբերմունքը վերացնելու քաղաքականություն: Սակայն դա այդքան ակնհայտ չէր կամ, վստահելով Հայաստանի Հանրապետության քաղաքականությանը, չենք պատկերացրել, որ մեր նկատմամբ կիրառված քայլերը կբերեն մեր բնութագրմամբ՝ <<սպիտակ եղեռնի>>: Նաև ցավում ենք, որ նոր իշնությունը շարունակում է նախկին իշխանության քաղաքականությունը մեր նկատմամբ, ինչը ցուցադրում են վերջին բոլոր իրադարձությունները: Մենք համոզված ենք, որ այդ բոլոր խնդիրները փոխկապակցված են իրար հետ:

- Օրինակ նշանակելով Դիմիտրով գյուղի դպրոցի տնօրեն, ով հայ շովինիստ է և ով նպատակ է դրել դպրոցը ամբողջովին դարձնել հայկական և ասորականը ոչնչացնել: Այդ տնօրենը իրեն թույլ է տալիս սպառնալ ասորերենի ուսուցչուհուն, որ «քեզ լավություն եմ անում, որ պահել եմ դպրոցում: Նայիր, հա, հանգի՛ստ, քեզ էլ գործից կազատեմ»: Նաև նշեմ այն հանգամանքը, որ 4-րդ՝ ավարտական դասարանում, թույլ չտրվեց անցկացնել ասորերեն լեզվի քննություն՝ ասորերենի ուսուցչուհուն ասելով՝ «քեզ այդ գլխացավանքը պետք ա՞»: Այդ տնօրենի նմանատիպ վերաբերմունքի արդյունքում արդեն երկու տարի անց Դիմիտրով գյուղի ասորի ազգությամբ բնակիչները կմոռանան, որ իրենք ասորի են:
- Տեր Միքայել Քահանան հանդիսանալով այդ տնօրենի ամուսինը (Մխչյան գյուղի բնակիչ և նույն գյուղի հայ եկեղեցու տեր հայրն է) բավական չէ, որ իրեն թույլ է տվել զավթել ասորական եկեղեցին և ասորական մատուռը՝ հայտարարելով, որ դա հայկական է, նաև քիթը խոթում է մեր համայնքի գործերի մեջ՝ հայտարարելով, որ մեր ուղղափառ ասորական եկեղեցին պարտադիր պետք է դառնա ասորական առաքելական եկեղեցի:
- Արարատի մարզի երկու ասորական գյուղերն (Դիմիտրով և Վերին Դվինը) առաջարկվել է ընդգրկել Համայնքների խոշորացման ծրագրի մեջ՝ գիտակցելով, որ դա կբերի Արարատի մարզի ասորական համայնքի ձուլմանը:

Ի՞նչ գնահատական կարելի է տալ այդպիսի քաղաքականությանը: Ինչու են Մխչյան գյուղի բնակչին նշանակել ասորական գյուղի դպրոցի տնօրեն (միակ թեկնածուն էր), որը Դիմիտրով գյուղի գյուղապետի հետ (ազգությամբ կիսահայ-կիսաասորի է, սակայն իրեն համարում է հայ: Նշեմ, որ նաև Հովիկ Աբրահամյանի բարեկամն է) աշխատում են վախեցնելով, ապատեղեկացնելով, խաբելով ասորական գյուղի բնակիչների մեջ պառակտում մտցնել:

Հարց՝ ի՞նչ նպատակով է այդ անձը նշանակվել ասորական գյուղի՝ Դիմիտրովի դպրոցի տնօրեն:

Արդեն հստակ կարելի է եզրակացնել՝ ոչնչացնելու Դիմիտրով գյուղի դպրոցում ասորերեն լեզվի դասավանդման հոսքը, և այդ եղանակով ոչնչացնելու Դիմիտրով գյուղի ասորական համայնքը՝ հայացնելով բնակիչներին:

Մենք դա գնահատում ենք, որպես <<սպիտակ եղեռն>> իրականացվող քաղաքականություն մեր նկատմամբ:

Դիմում ենք Ձեզ՝ խնդրանքով. կանխե՛լ դա:

Տվյալ պահին, իրավիճակը ՍՊԻՏԱԿ ԵՂԵՌՆԻՑ փրկելու նպատակով, անհրաժեշտ է՝

- Մեր եկեղեցու և մատուռի բանալիները վերադարձնել մեզ,
- Այդ տնօրենին մեր դպրոցից տեղափոխել այլ՝ հայկական միջավայր ունեցող դպրոց, քանի որ այդ անձը ոչ մտովի և ոչ էլ հոգեպես պատրաստ չէ ոչ հայկական միջավայրում աշխատելու: Ավելին, այդ անձնավորությունը ստեղծում է ազգային անհանդուրժողականության մթնոլորտ;
- Ինքը իրեն որպես հայ համարում է վերին խավ, իսկ մեզ՝ ոչ հայերիս, ցածր խավ;
- Դիմիտրով գյուղի դպրոցում պահպանել մեր ավանդական կրթությունը՝ ռուսերենով կազմակերպված կրթությունը՝ միաժամանակ ապահովելով ասորերենի ուսուցումը՝ որպես առարկա, ինչն առկա է ներկա պահին: Տնօրենը փորձեր է կատարում մեր ավանդական կրթություն ստանալու իրավունքը ոչնչացնել:
- Այդ հոսքում պակաս խտությամբ դասարանները Ձենթարկվեն երկկոմպլեկտավորմանը,
- Մեր ասորական գյուղերը չընդգրկել համայնքների խոշորացման ծրագրի մեջ;
- Նոր Արտագերս գյուղում վերականգնել ասորերենի ուսուցումը՝ նշանակելով իսկապես ասորերեն լեզվի մասնագետին: Նոր Արտագերսի ասորական համայնքի և լեզվի դասավանդման վերականգման նպատակով անհրաժեշտ է Նոր Արտագերս գյուղի դպրոցում բացել մեկ առաջին դասարան մեր ասորական ***կրթական առանձնահատկությունները հաշվի առնելով***:

Կից ներկայացնում եմ՝

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի նամակի պատճեն;
2. Մեր ՀՀ կրթության տեսչական մարմնի 12.06.2019 թ. № 01/01-1/364 - 2019 գրության պատասխանի պատճեն;
3. Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված մեր նամակի պատճեն:
4. ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակութային հուշարձանների ցուցակի մասին 2002 թվականի հունվարի 24-ի ՀՀ կառավարության N 65 որոշումը:

Հարգանքներով,
Ֆեդերացիայի նախագահ՝ Իրինա Գասպարյան

ՀԿՀՀ
02272905